

2020 թ.

Հարցաշար
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
Տևողությունը՝ 150 րոպե

9-րդ դասարան

Մի հեքիաթ աշխարհ կար՝ հուռթի այգիներով, զմրուխտ անտառներով, անծիր անդաստաններով, ակնախտիղ աղբյուրներով, թույրիթույր հավքերի սրտապարար երգերով:

Թվում էր՝ այս երկրի մարդիկ օժտված պիտի լինեին վեհանձնությամբ ու շռայլ հոգով: Սակայն այդպես չէր:

Մի ընչագուրկ ու տնանկ մանուկ էր ապրում այդ անագորույն միջավայրում: Տղան գաղտնի գննում էր մարդկանց՝ ապառաժից էլ կարծր սրտերը՝ տրտմությամբ համոզվելով, որ դրանք անողորմ են ու բիրտ:

Մի օր տղան, մախաղն առած, ճամփա ընկավ՝ գտնելու մի այլ աշխարհ՝ բարյացակամ ու կարեկից: Տեսավ ծովափին մի ձուկ՝ հոգեվարքի մեջ թաքտացող: Վերցրեց կենդանուն, խանդաղատանքով շոյեց ու զցեց ջուրը: Ձուկն ուշքի գալով բարբառեց մարդկային լեզվով.

– Բարի՛ տղա, ինչ-որ բան խնդիր, և ցանկությունդ կկատարվի:

Տամուկ աչքերը հանգչող հորիզոնին՝ տղան կերկեր ձայնով ասաց.

– ...

1. Ի՞նչ խնդրեց տղան: Շարունակի՛ր անավարտ միտքը: Վերնագրի՛ր տեքստը: (2 միավոր)
2. Տեքստից դո՛ւրս գրիր մակդրային որոշիչներով բառակապակցության հինգ օրինակ: (1 միավոր)
3. Գրի՛ր **անդաստան, ակնախտիղ, թույրիթույր, սրտապարար, վեհանձնություն, անագորույն, հոգեվարք, խանդաղատանք, տամուկ, կերկեր** բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Գրի՛ր **սիրտ** բառի տարբեր հոլովածներով չորս դարձվածք և մեկնաբանի՛ր: (2 միավոր)
5. Դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք կարող են բառակապակցություն կազմել կամ գործածվել **դեմք** բառի հետ. խստակյաց, երևելի, նանրախոս, խստադեմ, կարկառուն, անգո, ջղաձիգ, հողագույն, անխզելի, խորշակավոր, դժնի, մոմե, դիպուկ, ականավոր, բարեպատեհ, փառահեղ, կտտահար, կճատ, գողեգող, որոտընդոստ: (2 միավոր)
6. Նշի՛ր տեքստում գործածված **այդպես, այլ, դրանք, որ** դերանունների տեսակները և դրանց շարահյուսական պաշտոնները: (2 միավոր)
7. Ի՞նչ է նշանակում «արջի ծառայություն» թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
8. Կազմի՛ր մեկական բարդ և անանցավոր բառ **մրիկ, գիսակ** բառերի արմատներով: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Անկեղծ խոստովանություն» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)